ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս քաղաքային համայնքի 2021թ.վարչական բյուջեի եկամուտների տարեկան 757149.3 հազ. Դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 181517.8 հազ. դրամ, կամ 1-ին եռամսյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 24 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը 323086.0 հազար դրամի դիմաց կատարվել է 73498.1 հազար դրամ կամ կատարվել է 22.7 %-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 185319.3 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 43400.0 հազ. դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 23.4%-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 24.5%-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 21.8%-ով, տեղական տուրքերը՝ 26.5%-ով, պետական տուրքերը՝ 26.8 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը տարվա համար նախատեսված 11684.3 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 3092.2 հազ. Դրամ

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի փաստացի մուտքերը կազմել են 106924.8 հազ. դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը կատարվել է 21.8%-ով, կամ նախատեսված 143241.0 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 31192.9 հազ. դրամ, նույն թվում՝ հողերի վարձակալությունից եկամուտները՝ 5.3%-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 22.9%-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել է 1094.86 հազ. դրամ, կամ կատարվել է 20%-ով:

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 114562.3 հազ. դրամի դիմաց գանձումները կազմել է 24430.0 հազ. դրամ կամ կատարվել է 21.3 %, որից աղբահանության վճարների մասով կատարվել է 27.2%-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով կատարվել է 13.1 %-ով,

երաժշտական և գեղարվեստի դպրոցների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով՝ 35,6 %-ով, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարները՝ 75,3 %-ով:

Ծախսեր

2021 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 1-ին եռամսյակի ծախսերը կատարվել է 21.4 %-ով՝ 757149.3 հազ. դրամ տարեկան առաջադրանքից կատարվել է 162243.5 հազ. դրամ, որից՝ վարչական բյուջեի ծախսերը ըստ ծրագրերի կատարվել են՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով նախատեսված ծախսերը տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 21,0 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 17,8 %-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 20,4 %-ով:

Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով նախատեսված ծախսերը կատարվել է 15,9 %-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 24,2 %-ով:

Սոցիալական պաշտպանության ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 25,7 %-ով:

Մասիս քաղաքային համայնքի 2021թ. ֆոնդային բյուջեի առաջին եռամսյակի մուտքերը տարեկան նախատեսված 872670.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 587976,8 հազ. դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 518470,0 հազ. դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ նախատեսված 35728,0 հազ. դրամի դիմաց՝ 69506,8 հազ. դրամ:

2021 թ. Ֆոնդային բյուջեի առաջին եռամսյակի ծախսերը կազմել է 1955,0 հազ. դրամ, որը հատկացվել է համայնքապետարանի աշխատակազմի կարիքների համար աթոռների և տեսահսկման համակարգի ձեռք բերմանը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ն.ՍԱՀԱԿՅԱՆ